ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2014թ. մարտի 7 N 24- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՋԱՄՇԼՈՒԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԱՎԱՆԻ Ա. ՍԵՐՈԲԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԿԱՆՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՀԱԿՈՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՑԱՄԱՔԱՍԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ- ՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ– 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները.

Կարգադրում եմ՝

1. 2014 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ջամշլուի հիմնական դպրոց>>, <<Ավանի Ա. Սերոբի անվան միջնակարգ դպրոց>>, <<Կանչի հիմնական դպրոց>>, <<Հակոյի հիմնական դպրոց>>, <<Ցամաքասարի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2011, 2012 և 2013 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ Արիս Թովմասյանի, Սիրան Ասատրյանի և Կարեն Սուքիասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 16 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2014 թվականի մարտի 10-ից ավարտել 2014 թվականի մարտի 31-ին:

Ս. ՄԱՀԱԿՅԱՆ